12398

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«06» 10 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0190-21

Ձեռնարկողը՝ ***Քաղաքացի Տիգրան Մկրտչյան***
Ք. Երևան, Լենինգրադյան 21/4

Գործունեությունը՝ ***Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան փողոցի 21/4 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0190-21

< 06 > 10 2021թ.

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան փողոցի 21/4 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	Քաղաքացի Տիգրան Մկրտչյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան փողոցի 24/1 հասցեում քաղաքացի Տիգրան Մկրտչյանի կողմից նախատեսվում է կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր:

Գործունեությունն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված 2020թ հուլիսի 20-ի N01/18-07/1-U-7120-633 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 0.311հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7) կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատոսվող գործունեության տարածքը գտնվում է Երևան քաղաքի, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի, Լենինգրադյան փողոց, 21/4 հասցեում: Կառուցապատման համար նախատեսված հողամասի, ստորին և վերին նիշերի տարբերությունը մոտ 3 մետր է: Մոտեցումներն ապահովված են Լենինգրադյան փողոցից: Կից գտնվում են բնակելի շենքեր և կառուցապատումից ազատ հողամասեր: Համաձայն հայտի ինժեներաերկրաբանական եզրակացության արդյունքներով նախատեսվող գործունեության տարածքի երկրաբանական կառուցվածքին բնորոշ են լիցքային, կավային շերտերը: Տարածքում մինչև 35մ խորության վրա ստորերկրյա ջրեր չեն հայտնաբերվել:

Նախատեսվող գործունեության տարածքը կառուցապատված չէ, այն իրենից ներկայացնում է բաց ազատ տարածք, ծառաթփային բուսականությունը բացակայում է:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- հողատարածքի ընդհանուր մակերես – 3110մ^2,
- կառուցապատման մակերես – 1844մ^2,
- կանաչապատման մակերես – 1266մ^2,
- ավտոկայանատեղիների թիվը 165,
- բնակարանների թիվը՝ 169,

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվող բնակելի համալիրը կազմված է երկու բնակելի շենքերից՝ 14, 18 վերգետնյա, և ընդհանուր 2 ստորգետնյա հարկերով: Ստորգետնյա հարկերը ծառայելու են որպես կայանատեղի 165 ավտոմեքենայի համար: Ավտոկայանատեղերի մուտքը կազմակերպված է լինելու երկու թեքահարթակով, որոնք կայանատեղիների հարկերից սահմանազատված է հակահրդեհային մետաղական դարպասներով: Ավտոկայանատեղի ընդհանուր մակերեսն առանց թեքահարթակների և աստիճանավանդակների զբաղեցրած մակերեսը կազմում է՝ -1 հարկում՝ 2370 քմ, իսկ -2 հարկում՝ 2340 քմ: Առաջին հարկը նախատեսված է որպես հասարակական նշանակության օգտագործման նպատակով, մուտքերը կազմակերպված են առանձին: Բնակելի 13 և 17 հարկերից յուրաքանչյուրում նախատեսված է համապատասխանաբար թվով 77 և 92 բնակարան, 14 հարկանի շենքում՝ երեք ննջասենյակով՝ 1, երկու ննջասենյակով՝ 63 և մեկ ննջասենյակով՝ 13 բնակարան, իսկ 18 հարկանի շենքում նախատեսված են չորս ննջասենյակով՝ 1, երեք ննջասենյակով՝ 4, երկու ննջասենյակով՝ 74 և մեկ ննջասենյակով՝ 13 բնակարան: Յուրաքանչյուր շենքի բնակելի հատվածը սպասարկվելու է մեկական չծխացող աստիճանավանդակով: 18 հարկանի շենքը կահավորված է լինելու 2 մարդատար և 1 բեռնատար վերելակներով, իսկ 14 հարկանին՝ 1 մարդատար և 1 բեռնատար վերելակներով:

Համաձայն հայտի շենքի հիմնական բարձրությունը 64.60մ է, հաշված նախագծային 0.000 նիշից: Ճակատային հատվածներում և աստիճանավանդակների հատվածներում կան որոշակի ծավալների բարձրացում, առավելագույն բարձրությունը՝ 68.00 մ:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար, բնակելի շենքերում ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

Համաձայն հայտի համալիրի էներգաարդյունավետությունը նախատեսվում է համապատասխանեցնել Ա դասի, ինչի համար իրականացվելու են համալիր միջոցառումներ:

Ըստ հայտի շինարարության և շահագործման համար էլեկտրամատակարարումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի՝ 2x1000կՎԱ հզորության ՏԵ 7538-ի 0.4կՎ վահաններից, որի համար համաձայն տեխնիկական պայմանի լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ:

Բազմաֆունկցիոնալ շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին: Ջրամատակարարումն իրականացվելու է Մեծարենցի փողոցով անցնող D=800մմ ջրատարից, կոյուղին միացվելու է Մեծարենցի փողոցով անցնող D=1140մմ կոյուղատարին: Համաձայն հայտի տվյալ տարածքում մատակարարվող ջրի ճնշումը 0.1մթն. է, նախատեսվում է տեղադրել համապատասխան պոմպ: Անձրևաջրերի հեռացումը նախատեսվում է իրականացնել միանալով տարածքին մոտ անցնող նախագծային հեղեղատարին:

Բազմաբնակարան շենքի գազամատակարարումը նախատեսվում է իրականացնել համաձայն «Հայռուսգազարդ» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի՝ Երևան ԳԲԿ-ն սնող Dպ-500 կողմնատար-գազատարի 0.075 կմ-ից Q=610 խմ/ժամ ծախսով: Շենքերի ջեռուցման և տաք ջրամատակարարման համար նախատեսված է 2 շենքերի համար տանիքներում կառուցել 2 առանձին կաթսայատներ: 14 հարկանի շենքի համար նախատեսված կաթսայատանը տեղադրվելու են 2 հատ 450 կՎտ հզորությամբ

եվրոպական արտադրության կաթսաներ, 18 հարկանի շենքի համար նախատեսված կաթսայատանը տեղադրվելու են 2 հատ 550 կՎտ հզորությամբ եվրոպական կաթսաներ, համալրված գազային հրածորանով և ավտոմատ կառավարման վահանակներով:

Համաձայն նախնական գնահատման հայտի շինարարական աշխատանքները տևելու են 34 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ աշտարակային կռունկ, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, տոփանիչ, էքսկավատոր, ավտոբետոնատար և այլն: Շինարարական հրապարակի մակերեսը կազմելու է 500մ^2, որտեղ պահեստավորվելու են շինարարության համար անհրաժեշտ նյութերը, կայանվելու են համապատասխան շինտեխնիկան, ժամանակավոր շինությունները և այլն: Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Բնակելի համալիրի նախագիծը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 27570խմ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող 20500խմ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Շինարարական նյութերից օգտագործվելու են ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ՝ կենցաղային (մոտ 4.93տ) և շինարարական աղբ (280մ^3): Շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, իսկ կենցաղային աղբը տեղափոխվելու է աղբահավաք ծառայության կողմից:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների, հանվող գրունտի ջրցանի, շինանձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (23 մարդ), ինչը կազմում է 0.575մ^3/օր: 500մ^2 ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 2մ^3/օր: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 2.84մ^3/օր: Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերն ուղղորդվելու են պարզարան (25մ^3), որտեղ կատարվելու է մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը բերվելու է պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով: Աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն՝ տեղադրելով բիոզուգարաններ, իսկ խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատումն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից համաձայնեցված բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Կանաչապատ մակերեսը կազմում է 1266մ^2: Քանի որ, ըստ գնահատման հայտի շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է, նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի 180մ^3 բուսահողի լիցք, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Տարածքում նախատեսվում է տնկել թղկի սրատերև կարմիր, գնդաձև հիլենի, սյունաձև

թույա, խենոմելես, սակուռա, բարբարիս, ասպիրակ, Ֆորզիցիա, սամշիտ 315 գծմ, ծաղկանոց – 52 քմ, սիզամարգ 1258քմ:

Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է տարածքի հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում օրական 2-3 անգամ,
- աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ,
- սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրության թաղանթով,
- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում՝ փակ ծածկով մեքենաներով,
- հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավվում, ինչպես նաև ապահովել դրանք տեխնիկական նորմալ վիճակի շահագործումը,
- շինհրապարակում քանդման և շինարարության ընթացքում թափոնների տարանջատում,
- տնկված ծառերի և խոտածածկի խնամք և մոնիթորինգ,
- մթնոլորտային օդի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով հողերի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ,
- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների պահպանում և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար՝ ամբողջ շինարարության ընթացքում նախատեսվելու է հատկացնել 2065000 դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. համաձայն նախնական գնահատման հայտի բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ազատ՝ չկառուցապատված հողատարածքի վրա, ինչը չի առաջացնելու շրջակա միջավայրի վրա լրացուցիչ ազդեցություններ: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Երևանի քաղաքապետարանը, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանը, շրջակա միջավայրի

նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը: Հայտը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային քննարկումներ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
- Ապահովել հայտում նախատեսված՝ գործունեության շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացումը:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության, քաղաքաշինական նորմերը և պահանջները:
- Նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի էներգախնայողության և էներգաանվտանգության հետ կապված միջոցառումներն իրականացնել՝ համաձայն ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ի N426-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական պահանջների:
- Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման պահանջով, գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Տիգրան Մկրտչյանի կողմից ներկայացված Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան փողոցի 24/1 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ.մասնագետ՝ Ա. Վարդանյան